ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լ.Ղ. Շիրինյան,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
Քաղաքագիտության բաժնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Անվտանգությունը հասարակական օրգանիզմի այն վիճակն է, երբ նա ներքին ու արտաքին անբարենպաստ ներգործությունների պայմաններում, պահպանում է իր ամբողջությունն ու ինքնազարգացման կարողությունը: Ազգային անվտանգությունը սահմանվում է որպես կապերի ու հարաբերությունների այնպիսի ամբողջություն, որոնք բնութագրվում են որպես անձի, հասարակության և պետության մի վիճակ, երբ ապահովվում է նրանց հաստատուն գոյությունը, կենսական պահանջմունքների բավարարումն ու իրականացումը, ներքին ու արտաքին վտանգների արդյունավետ կասեցումը, անձի, հասարակության և պետության ինքնազարգացումն ու առաջընթացը:

Ազգային ավտանգությունը արտացոլում է անվտանգության կապը ազգի՝ որպես ամբողջական համակարգի հետ: Վերջինս իր մեջ ընդգրկում է հասարակական հարաբերություններն ու ազգային գիտակցությունը, հասարակության ինստիտուտներն ու նրանց գործունեությունը, որոնք և ապահովում են ազգային շահերի իրականացումը պատմականորեն ձևավորված կոնկրետ իրադրության մեջ: Ազգը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես էթնիկական մի հանրություն իր ավանդույթներով, սովորույթներով ու մշակույթով:

Ընդունված է առանձնացնել ազգային անվտանգության երեք մակարդակ, անվտանգության երեք սուբյեկտ՝ անձ, հասարակություն և պետություն: Անձի անվտանգության համար հանգուցային խնդիր է նրա իրավունքների և ազատությունների պահպանումը, հասարակության համար՝ կայունությունը, քաղաքացիների կյանքի նորմալ պայմանների ապահովումը, նյութական ու հոգևոր արժեքների բազմապատկումը, պետության համար՝ նրա ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը: Ընդ որում՝ ազգային անվտանգությունը ամբողջության մեջ բազմապլան է, համալիր, իսկ հաճախ՝ հակասական մի համակարգ: Ուստի նա պահանջում է գիտաքաղաքական չափանիշների կիրառություն:

Ազգային անվտանգության հայեցակարգը հայացքների որոշակի համակարգ է անձի, հասարակության և պետության գոյությունն ու առաջընթացը ապահովելու մասին: Այն անվտանգության ըմբռնման, մեկնաբանության եղանակ է, հիմնական տեսակետ, նրա համակարգային մեկնաբանության ղեկավարող գաղափար, առաջատար մտահղացում, կառուցողական սկզբունք: Անվտանգության հայեցակարգը ձևավորվում է երկրի աշխարհագրական, բնակլիմայական, տնտեսական, ժողովրդագրական, ընկերային, քաղաքական, ռազմաքաղաքական, ազգագրական, բարոյական ու այլ ազդակների, ազգային ու մշակութային ավանդույթների ճանաչողության հիման վրա: Վարդապետությունը (դոկտրինը) ուսմունք է, սկզբունքների ամբողջություն, համակարգված տեսություն: Անվտանգության վարդապետությունը ձևակերպում և իրենով արտահայտում է անվտանգության ռազմավարական ընդհանուր նպատակները: Շատ հաճախ նա պետական պաշտոնական դրույթների համակարգ է: Հայեցակարգը (կոնցեպցիան) նախորդում է վարդապետությանը (դոկտրինին): Հաճախ վարդապետությունը ընկալվում է որպես հայեցակարգ: Մինչդեռ՝ վարդապետությունը ձևավորվում է որոշակի հայեցակարգի շրջանակներում:

Անվտանգության հայեցակարգը հիմնական ռազմավարական գերխնդիրները ձևակերպում է ընդհանուր հասկացություններով, որոշակիորեն վերացարկվում է հասարակական կոնկրետ իրադրությունից, ընդգրկում է պատմական տևական ժամանակաշրջան, ուստի և կոնկրետանում է իր բաղադրամասերում: Բովանդակային առումով ազգային անվտանգության ընդհանուր հայեցակարգի մեջ ընդունված է առանձնացնել քաղաքական, տնտեսական, ռազմական, բնապահպանական, տեղեկատվական (ինֆորմացիոն) անվտանգությունը, ինչպես նաև ազգի մշակութային զարգացման անվտանգությունը (առաջնահերթությունները որոշվում են ազգային շահերի սահմանման ճանապարհով): Յուրաքանչյուր երկրի, այդ թվում նաև արդի Հայաստանի անվտանգությունը էապես կախված է արտաքին միջավայրից: ՀՀ-ի պարագայում կենսական են տարածաշրջանային՝ Հարավային Կովկասի (Այսրկովկաս), Մերձավոր Արևելքի, եվրոպական և միջազգային անվտանգության համակարգերը:

Անվտանգության ոլորտների ապահովման հիմնական սուբյեկտը պետությունն է, որն իր տվյալ գործառույթը իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջոցով գործող համապատասխան օրենսդրության շրջանակներում: Սակայն պետությունն ինքը ևս անվտանգ գոյության պահանջ ունի: Իշխանության բարձրագույն մարմինները այդ խնդիրը լուծում են

հատուկ պետական կառույցների, ամբողջ բնակչության օգնությամբ: Պետանվտանգությունը աշխարհի բոլոր պետությունների առաջնահերթ հոգացողության և ուշադրության առարկան է: Անվտանգության ապահովման անմիջական գործառույթի իրականացման համար գործադիր իշխանության համակարգում կազմավորվում են անվտանգության համապատասխան մարմիններ: Պետանվտանգության կարևոր խնդիրը ազգային անվտանգության վտանգների (սպառնալիքների), այսինքն՝ ազգի, հասարակության և պետության կենսական շահերին վտանգ ներկայացնող պայմանների ու գործոնների հանրագումարի կանխատեսումն ու ժամանակին վերացումն է:

Պետանվտանգության գլխավոր խնդիրն է այնպիսի տնտեսական, քաղաքական, միջազգային ու ռազմագիտական պայմանների ստեղծումն ու պահպանումը, որոնք թույլ կտան ազգի՝ որպես ամբողջության, համակողմանի զարգացումը: Այս հանգամանքը բացառիկ նշանակություն ունի հայության, որպես աշխարհասփյուռ ժողովրդի, ուժերի ու կարողությունների համախմբման տեսակետից՝ ազգային պետության միջազգային դիրքերի ամրապնդման և տարածաշրջանային գործոնի ապահովման ռազմավարական նկատառումներով:

Ազգային անվտանգության ապահովման հիմքում կարող են ընկած լինել հետևյալ սկզբունքները.

- սահմանադրական կարգի պաշտպանությունը,
- անվտանգության բոլոր բաղադրամասերի միասնությունը, փոխգործողությունը և հավասարակշռությունը, առաջնահերթությունների փոփոխումը՝ կախված իրադրությունից,
- անվտանգության քաղաքական, տնտեսական և տեղեկատվական ապահովումը,
- իրապաշտությունը (առկա ռեսուրսների, ուժերի և միջոցների հաշվառումով) ներքին ու արտաքին քաղաքական խնդիրների առաջադրման ժամանակ,
- միջազգային օրենսդրության գերազանց իմացությունը և համապատասխան կիրառությունը,
- անվտանգության ապահովման ուժերի և միջոցների կենտրոնացված համակարգումը,
- Հայաստանի Հանրապետության ազգային շահերի պաշտպանության նպատակով կանխատեսման ծառայությունների ստեղծումն ու հստակ կազմակերպումը և նախականխող հարվածների վերաբերյալ որոշումների ընդունումը:

Որևէ երկրի, առավել ևս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության որևէ հիմնարար խնդիր քննելիս անհրա-

ժեշտ է օբյեկտիվ իրողությունների (սկզբունքների) հաշվառում, որոնցից են.

- երկրի աշխարհագրական դիրքը և Հարավային Կովկասի, մեծ հաշվով՝ Մերձավոր Արևելքի երկրաքաղաքական տարածաշրջանի առանձնահատկությունները,
- տարածաշրջանով շահագրգիռ հիմնական պետությունների՝ Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Իրան, Չինաստան, Եվրամիություն երկրառազմավարության (գեոստրատեգիայի) իմացությունը,
- հայոց քաղաքակրթական-մշակութային ինքնության յուրահատկությունը,
- հայ ժողովրդի աշխարհասփյուռ վիճակը,
- հայոց ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունները և այլն:

Հ.Գ. - Հարկ է նկատի ունենալ, որ ազգային անվտանգության հայեցակարգերն ու վարդապետությունները, որպես կանոն, մշակվում են ազգային շահերի սահմանումից հետո և նրանց շրջանակներում: Եվ ընդհանրապես, ազգային կենսական շահերի սահմանման միջոցով է միայն հնարավոր ախտորոշել անվտանգության վտանգների (սպառնալիքների) հիմնական ուղղությունները և մշակել անվտանգության ապահովման իրավաքաղաքական մեխանիզմները: